

պարզ են և ըմբռնողութիւնները սուր. միայն՝ բնութեան այս բարեկի անդաստանը (ինչպէս վերերէր ծանօթութեան մէջ հասկացուցի) անխնամ և անհերկ մնալու պատճառաւ կշորանան կմնան անպտուղ կամ ընդհակառակն փշեր կրուցցնեն. Բայց ինչպէս նկատում եմ՝ հասարակութիւնը այս վիճը օրէ ցօր լաւ նկատում է. նա կաշխատի արձակ ճանապարհ պատրաստել իւր և սերունդոց առաջին, և վերջապէս փառաւորել իւր անունը մարդկութեան պայմաններումը:

Սրանից մի ամիս յառաջ մի օգտաւէտ գործի ձեռնարկութիւն արաւ Աղէքսանդրապօլի հասարակութիւնը, նա շտապեցաւ բերել տալ Պետերբուրգիցը հիւսիսային Գերմանիայում Զուեցարիայումը ուսուցչութեան պատրաստելու ուղարկուած մի ուսուցիչ (Պ. Ս. Պէկ - Նազարեանց Տրփիսեցի), որոյ համար առաջարկած էին Պետերբուրգի Արդոյ ուսանողները: Մեր հասարակութիւնը իւր խորին շնորհակալութիւնը յայտնելով նոյն Ուսանողներին, ուղարկեց ուսումնարանապատկան փողից ճանապարհի՝ զրքերի և այլ գործիքների ծախս. և սպասում է նոյն ուսուցչի շնորհաբեր գալստեանը: Արդարեւ այս բաղդը Աղէքսանդրապօլու համար մի երկնային շնորհ էր:

Հովհաննէս Խոջայեանց:

Ս. Աղէքսանդրապօլ:

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԲ

ԿՏԱԿ ՅԱԿՈԲ ՍԷՐՎԷՐԵԱՆԻ

Հանգուցեալ արքունի ճարտարապետ Սէրվերեան Յովհաննէս աղայի եղբայր մեծապատիւ Յակոբ աղան, 20000 զրուշ կտակ ըրեր է. Իսկիւտարի Եէնիմահալլէի երկսեռ վարժարանաց համար, Սեմեան գերապատիւ Յովհաննէս եպիսկոպոսի ձեռք, իւր և աղնուափայլ ամուսնոյն մահաւանէն յետոյ տրուելու պայմանաւ:

Թաղին մեծապատիւ Խորհուրդը մեծաւ գոհութեամբ արձանադրելով այս կտակը թաղային տոմարին մէջ, փութացաւ բոլոր թաղեցւոց կողմանէ շնորհակալեաց Ուղերձ մը մատուցանել մեծապատիւ կտակարին:

Հատերը գիտեն թէ Սէրվերեան ընտանիքը ժամանակաւ որչափ հոգ տարած և նուէրներ տուած է ձեռնարանին համար, որուն արդիւնքը կվայելէ այսօր աղբը՝ իւր մէջ գտնուած նշանաւոր անձանց շատը նոյն Հաստատութեան աշակերտներն ըլլալով: Հետեւաբար աւելորդ կհամարիմք Սէրվերեան Յակոբ աղայի այս ուսումնասիրական գործին վերայ գովեստներ խօսիլ, սակայն՝ պարտ է մեզ որ այս առթիւ ձեռնհաս ազգայնոց հրաւեր կարգամք, Սէրվերեանի օրինակին հետեւելու համար:

Փետր. 11 - 650 Գէլդ. 26

ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԱՆԵՒՈՒ
Ն ՈՐ Զ Ե Ի Ե Ր

Տարի մ'անցաւ, բայց մեր հոռմէական ազգայնոց մէջ Հասունեան և Հակահասունեան անուններով բացուած երկպառակութեան մեծ վիճն տակաւին չգոցուեցաւ. Իրաւախօշութեան և հաշտութեան համար եղած յորդորները ապարդիւն կմնան, և ատելութիւնն ու հեռը օր յօրէ կաւելնայ նորանոր դէպքեր վրայ գալով: Ահաւասիկ խիստ ախուր դէպք մ'ալ այս օրերս պատահած է մայրաքաղաքիս մէջ, որ հետեւեալ կերպիւ կը պատմուի և զոր կհրատարակեմք ցաւօք սրտի:

Հինգշաբթի օրը՝ դեկտ. 31 Հասունեան կողմէն 500 ի չափ անձինք Ղալաթիոյ եկեղեցին կժողվուին, և կուգին զրօք փակելովք պատարագ մատուցանել տալ Գեր. Հասունեանի, Հակահասունեանք ըսելով՝ կուգան եկեղեցւոյն դուռը ձեռք կառնեն և բաղխել կսկսին. ներսը գանուողները չեն բանար. Ասոր վրայ, Հակահասունեանք պատրիարքարանի կողմը գտնուած դուռը երկամենրով կփորեն և կյաջողին տեղէն հանելով բանալ. ասոնց մեջէն ներս մտնողները բիրերով ծնծուելով դուրս կվռնտուին. հետեւաբար՝ կսկսին եկեղեցւոյն պատուհանները քարկոծել. Վերջապէս՝ կոխը կմեծանայ. Ոստիկանութեան պաշտօնեայ վսեմ՝ Հիւանի փաշան կհասնի և գտած մարդիկը բռնելով Պօլիս կղրկէ:

Միանգամայն կպատմուի թէ՛ Հակահասունեանք եկեղեցւոյն մերձակայ տան մը մէջ Պա-

տարազի զգեստներով վարդարեալ վարդապետ մը պատրաստած են եղեր, որ իրենք եկեղեցիէն ներս մտած ատեն գալով պատարագ մատուցանէ։ Այս վարդապետն ալ ոստիկանութեան կողմանէ բռնուած անձանց մէջ է եղեր։

Հասունեան էֆէնտին երէկ յիշեալ եկեղեցւոյն մէջ պատարագ մատուցեր է, և եկեղեցւոյն դուռները պահապան կանգնէր են շատ մը զօրք, որպէս զի նոր շփոթութիւն և աղմուկ մը չպատահի։

Յայտնի է թէ գեր. Հասունեանի փոխանորդն ալ այս կերպով պատարագ մը մատուց, երբ ինքը Հոռոմ կոտնուէր։

գեր. Հասունեան էֆէնտին այսպէս Քրիստոսի Ս. Աւետարանը ոտքին տակն առնելով կկոխտէ ու կպզծէ։ Քրիստոս մեր տէրը կստիլեցունէ մեզի, որ պատարագ մատուցանելու ելնող մէկը նախ պէտք է երթայ հաշտուի իւր խոռովեալ եղբօրը հետ և ապա մատուցանէ։ Ինչ անուն տալու է այն կղերականին, որ խաղաղութեան Բստուծոյ այս պատգամը կանարգէ և պատարագ մատուցանելով ժողովրդեան զայլմակողութեան ու խռովութեան պատճառ կըլլայ։ Այսպիսի պատարագ մը Բստուծոյ առջև Վայէնեան պատարագ մ'է, և ոչ այլ ինչ։

Հոռոմեականք՝ թէ և բաժնուած են Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցէն, բայց՝ ըստ որում մեր ազգայինքն են, կցաւմբ անոնց վրայ, այսպիսի զլուխ մ'ունենանալուն համար։ Հասունեան արգեօք Ս. Աւետարանի որ պատուիրանաց համաձայն կը համարի իւր ներկայ ընթացքը. ժողովրդեան մեծագոյն մասը իրեն դէմ զայլմակած է, և չուզէր զինքը այլ ևս իւր զլուխն ունենալ. ըստ Աւետարանին՝ պէտք է ցատկէ իւր բաղմած աթոռէն և իւր ոտից փոշին թօթափելով մեկնի. և ոչ թէ յամառելով անխախտելի մնալ հոն և պատճառ ըլլալ ժողովրդեան յուզման, տառապանաց ու մեծամեծ վնասուց։

Որ քրիստոնեայ կրնայ հաշտ աչօք նայիլ այն կղերականին վրայ, որ Պատարագ կմատուցանէ սուրիններու զօրութեան կոթնած։ Ահա ասի՛կ, այս չքրիստոնէական գործը կկատարէ Հասունեանէֆէնտին։ Հոռոմայ Պապի՞ն բողբոխ պէտք է.— բայց նատակաւին կպնդէ աշխարհական իշխանութիւնը

ձեռք ձգելու համար. — բայց նա "Իմ" ըսածս ու ըրածս անսխալ ու անդառնալի են, կրէ, և Հասունեանը ես հաստատած եմ իւր պաշտօնին մեջ և անոր մէկ մագէն անգամ չեմ անցնիր"։ Ուրեմն, որու բողբոխն խնդճ Հակահասունեանք. — ամենայն զօրութեամբ և անվհատ որով ըողորբելու անոր, որ չընդունիր այս սատանայական սկզբունքն և ժողովրդեան գլխոյն ընտրութիւնը ժողովրդեան կուտայ։

Փետր. 651 Յունի. 2

ԼՐԱԳՐԻ ՀՆԱՐՈՒԻԼԸ:

Ըստ հաւաստելոյ քաղաքագիտաց՝ լրագիրը՝ նախ Վէնէտիկ քաղաքի մէջ հնարուած է այսպէս։ Վէնէտիկցիք՝ 1563 թուականին՝ Օրէնդիր Սուլթան Սուլէյմանի հետ վարուած մեծ պատերազմին մէջ պատահած պատերազմական լուրերը ամեն օր մէն մի թղթոց վերայ ծանուցանելով կը ցրուէին. և նոյն ծանուցագիրը կարգալ կամեցողներէն մի ստակ փող կառնուին, որ իւրեանց լեզուով Վենէտիկ կը կոչուէր. և այս առթիւ նոյն ծանուցագրոյն անունը Վածձէթա կամ Վաղեթայ ասացին։ Քսան տարի յետոյ Անդղիացիք ևս այսպիսի մի պատճառով սկսեցին այսպիսի լրագիր հրատարակել, և 1630 թուականին Թընստո անուն անուանի Պաղղիացի բժիշկ՝ ինչ ինչ բժշկական յօդուածովք իւր հիւանդները զօսցնելու համար երբեմն քաղաքական յօդուածներ ևս գրելով մի լրագիր տպեց և հրատարակեց. որ ապա բոլոր լրագրաց յառաջադիմութեան մի պատճառ եղաւ։

Մենշտի. 1477. Յունի. 26: